




ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՌ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՀԱՅՈՑ ՈՐ ՅԱԽՍՏՐԱԼԻԱ

Աստուծոյ շնորհիւ ահա այժմ վերադարձած ենք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուրկէ արտի պարտք կը պահէք այս Գիրք ուղղելու ձեր բոլորին անգամ մը ևս յայտնելու համար Մեր հայրական սէրը և Մեր խոր շնորհակալութիւնները ու ջերմագոյն գնահատանքը ձեր ցուցաբերած արտապէղ ընդունելութեան Մեր հովուապետական անդրանիկ այցելութեան առթիւ: Առաջինն էր ան իր տեսակին մէջ և իսկապէս պատմական նշանակութիւն պգեցաւ ձեր բոլորի օրինակելի վերաբերումով և ձեր կեանքին մէջ յառաջ բերած վերանորոգութեան ու վերաշխուժացման շարժումով ու բարիքներով:

Առաջին հերթին, արտի պարտք կը պահէք Մեր խորապգաց շնորհակալութիւնները յայտնելու Աւստրալիոյ և Նոր Զելանտայի տիրախնամ թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Աղան Արքեպիսկոպոս Պալիօպեանին, Թեմական Խորհուրդին, Ընդունելութեան Յանձնախումբին, եկեղեցական վարչութիւններուն, հոգևորականաց դասուն, հայկական ամենօրեայ դպրոցներու Հոգաբարձութեանց, Տնօրէնութեանց և Ուսուցչական կապմերու անդամներուն, հոգևոր, ապգային, երիտասարդական, մշակութային, բարեգործական կապմակերպութիւններուն և հաստատութիւններուն, մամուլի և հաղորդակցութեան այլ միջոցներու պատասխանատուներուն, որոնք ամբողջական և անվերապահ մասնակցութեամբ իրենց գործօն և օգտաշատ բաժինը բերին Մեր հովուապետական անդրանիկ այցելութեան բեղմնատառ պտղաբերման համար:

Մեր բարձրագոյն գնահատանքը նաև Աւստրալիոյ պետական, քաղաքային իշխանութեանց, դիւանագիտական ներկայացուցիչներուն, այլ քրիստոնէական եկեղեցիներու պետներուն և ներկայացուցիչներուն, Աւստրալիոյ եկեղեցիներու Ապգային Խորհուրդին (National Council of Churches in Australia) և Նիւ Սաութ

Ուէյլլի ու Վիքթորիայի միջ-եկեղեցական կապմակերպութիւններուն, որոնց ղեկավարները և ներկայացուցիչները ամենալայն չափով և եղբայրական ջերմ սիրով բերին իրենց մասնակցութիւնը Մեր հովուապետական այցելութեան յատուկ հրապարակային ձեռնարկներուն, յարգալից վերաբերումով, միասնական աղօթքներով ու էկումենական հանդիպումներով:

Այս բոլորով Մեր այցելութիւնը չմնաց սահմանափակուած պուտ Աւստրալիայի ժողովուրդի կեանքի ծոցին մէջ, այլ ստացաւ աւելի լայն տարածք Աւստրալիական ընդհանուր կեանքի շրջագծին մէջ:

*
*
*

Մենք փառք կու տանք Աստուծոյ, որ Փարիզէն դէպի Աւստրալիա Մեր ճանապարհին վրայ կանգ առինք ի Սինկափուր և ի Պանքոք (Թաիլանտ), ուր առաջին անգամ ըլլալով էր որ Ամենայն Հայոց Կաթողիկոս մը ոտք կը դնէր:

Սինկափուրի առաջին քրիստոնէական եկեղեցին եղող և Ս. Գրիգոր Լուսաւորիչ նուիրական և սրբաբոյր անունով մկրտուած (1835-ին կառուցուած) Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցինք ի ներկայութեան Սինկափուրէն, Քուալա Լամփուրէն, Պանկլատէշէն, Անգլիայէն, Ֆրանսայէն ժամանած հայերու, և Կաթոլիկ, Օրթոտոքս, Անգլիքան և Բողոքական եկեղեցիներու ներկայացուցիչներուն: Մենք հոգեհանգստեան աղօթք մատուցինք և յատուկ խօսքով յարգանք ընծայեցինք բոլոր անոնց յիշատակին որ այդ եկեղեցին կառուցած և պահպանած էին անցնող 160 տարիներու ընթացքին Ծայրագոյն Արևելքի այդ հեռաւոր միջավայրին մէջ: Բարձրօրէն գնահատեցինք նաև այս օրերուն Սինկափուրի պետութեան կողմէ պատմական յուշարձան (national monument) նկատուած այդ եկեղեցւոյ բարւոք պահպանութեան և հոգևոր ծառայութեան համար փոքրաթիւ հայերու ցոյց տուած հոգածութիւնը:

Պանքոքի մէջ Մենք երջանիկ առիթն ունեցանք ի մի համախմբուած հայ ժողովուրդի պաւակները (Պանքոքէն, Հոնկ-քոնկէն, Քորէայէն, Լիբանանէն, Պարսկաստանէն, Պրապիլէն, Անգլիայէն, Միացեալ Նահանգներէն, Ապու Տապիէն), աւելի քան յիսուն անձերը ողջունելու, ս. պատարագի մատուցման ընթացքին Հայրապետական պատգամ ուղղելու, ճաշկերոյթ-հաւաքոյթներուն Մեր խօսքն ուղղելու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Մայր Հայաստանի կենսանորոգիչ շունչը իրենց փոխանցելու:

Միանգամայն հանդիպումներ ունեցանք պետական և կրօնական պետերուն, դիւանագիտական ներկայացուցիչներուն հետ, որոնք Լիբանանի դեսպան Տքթ. Վաչէ Նիւրբէթեանի ապնի հրաւերով ի մի էին հաւաքուած յատուկ ճաշկերոյթ-ընդունելութեամբ: Որքա՛ն մեծ ուրախութիւն եղաւ Մեզ համար այնտեղ ողջունել նաև ներկայութիւնը Չինաստանի մօտ հայոց ապատ ու անկախ Հանրապետութեան հաւատարմատար՝ Պրն. Ապատ Մարտիրոսեանին, որ յատուկ կերպով եկած էր Փեքինէն Մեզ ընդունելու համար: Հոգևոր և ազգային վերանորոգման երկու օրեր, որոնք անմոռանալի ապրումներով պիտի մնան անջնջելի Մեր յիշողութեան մէջ:

*
*
*

Այս հեռագնաց ճամբորդությունն է վերադարձին, երէկ, Կիրակի օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Մեր ազգային քրիստոնէական ծննդավայրին մէջ, յընթացս սուրբ և անմահ պատարագին, Աւստրալիոյ, Սինկափուրի և Պանքրֆի մեր սիրեցեալ ժողովուրդին բարօրութեան համար յատուկ աղօթք կատարեցինք և Մեր քարոզով Մայր Աթոռոյ Միաբանութեան, Հոգևոր Ճեմարանի ուսանողներուն և հաւատացեալ ժողովուրդին փոխանցեցինք Մեր տպաւորութիւնները և խոհերը ձեր Թեմին Մեր տուած այցելութեան առիթով:

Գոհաբանական ու փառատրական Մեր աղօթքէն ետք, ահա այս Հայրապետական Գիրը կ'ուղղենք ձեզի և կ'ուզենք վերապրեցնել ձեր մէջ որոշ մտածումներ, կատարել որոշ յանձնարարութիւններ, որոնց մասին երբեմն հրապարակաւ արտայայտուեցանք արդէն Հովուապետական Մեր այցելութեան ընթացքին այլապէս առիթներով թէ՛ եկեղեցիներու բեմերէն, թէ՛ սրահներու ամպիոններէն և թէ՛ ճաշկերոյթ-ընդունելութիւններու ընթացքին:

Ա

Հոգևոր-կրօնական կեանքը սի'րտն է մարդկային մեր կեանքին, և սիրտն է եղած հայութեան մեր դարաւոր կեանքին: Քրիստոնէական մեր հաւատքը ամենէն մեծ հոգեկան ոյժն է եղած մեր ողջ պատմութեան ընթացքին և է՛ այսօր: Աւետարանի մէջէն մեզի աւանդուած Քրիստոսի քարոզութիւնները, բարոյական սկզբունքները մեր հայրերու եկեղեցական հոգևոր աւանդութիւնները աղբիւրն են մեր կեանքի առողջութեան, տոկունութեան և երջանկութեան:

Մենք խորապէս ուրախացանք տեսնելով որ մեր եկեղեցիները թէ՛ Սիտնիի և թէ՛ Մելպուրնի մէջ Հոգևոր կեանքի առատաբուխ աղբիւրներ են: Մեր եկեղեցւոյ մէջ մատուցուած պատարագները, խորհրդակատարութիւնները, կատարուած քարոզութիւնները, դպրաց խումբերու կողմէ ժողովուրդին մատուցուած շարականները, հոգևոր քոյրերու մատուցած աղօթքները իսկապէս հոգևոր կեանքի ոռոգման առուակներ են, որոնք Աւետարանէն բխելով, մեր եկեղեցւոյ Հայրերու ծիսական-աղօթական կեանքի հոսանքներով անցնող՝ կը ծաղկեցնեն հոգևոր անդաստանը Աւստրալիոյ մեր ժողովուրդի կեանքին:

Եկեղեցին դո՛ւք էք. ձեր մասնակցութեա՛ւք է որ եկեղեցին շունչ կ'առնէ: Համախմբուեցէք անոր մէջ, Ս. Պօղոս Առաքեալի խօսքով "Հոգւով եռացէք", մանաւանդ Մեծ Պահոց, Աւագ Շաբթուան և Ս. Զատիկի այս շրջանին, երբ հոգևոր կեանքի խտացեալ շրջան մը կ'ապրի մեր Ս. եկեղեցին: Աշխարհիկ կեանքը թող չտիրապետէ այնպէս և այնքան որ հոգևոր կեանքը խամրի կամ թառամի ձեր անհատական, ընտանեկան և համայնքային կեանքի անդաստաններուն մէջ:

Բ

Մեզի խոր ուրախությունն պատճառեց Աստրալիայի գաղութի ծոցին մեջ ծաղկուն վիճակի մեջ տեսնել Ս. Մեսրոպի «փոքր ատու»-ն՝ հայկական վարժարանը։ Որքա՛ն մեծ հրճուանքով Մենք գտնուեցանք "Համապգային"ի «ԱՐՇԱԿ ԵՒ ՍՕՖԻ ԳՕԼՍՏԸՆ», Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության "ԱԼԵՔՍԱՆԴՐ" և հայ կաթոլիկ համայնքի "Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ" ամենօրեայ վարժարաններուն մեջ այնտեղ տեսնելով եռուն կեանքը հայ նոր սերունդին, հայերեն լեզուի և մշակոյթի կենսունակ պահպանման։

Հոգեկան գոհությանն պագումով ողջունեցինք նաև միօրեայ վարժարանները թէ՛ Հ.Բ.Ը.Մ-ի, թէ՛ "Համապգային"ի հովանաւորութեան տակ գործող և թէ՛ "Թուճանեան" անունով կնքուած դպրոցին Մեր տուած այցելութիւններուն ընթացքին։ Անփոխարինելի երջանկութիւնն պագինք ամէն անգամ երբ տեսանք վառվռուն աչքերով մեր երեխաները, նոր ծիլերը հայոց ազգին, որոնք ուրախ և ժպտալից խանդով կ'արտասանէին, կ'երգէին, կը պարէին, ուղերձ կը կարդային, մէկ խօսքով՝ իրենց մատղաշ կեանքը կը լեցնէին անթառամելի ոյժովը հայոց լեզուին և մշակոյթին։

Մշակութային կեանքի զարգացումը՝ հայ երաժշտութեան, հայ գրականութեան, հայկական արուեստներու արժէքներուն ծանօթացումով և տարածումով՝ ձեր հաւաքական կեանքի կարևորագոյն երևոյթներէն մէկը պէտք է կազմէ։ Մենք ուրախացանք տեսնելով մեր սուրբ եկեղեցիներու երգչախումբերու աշխոյժ կեանքը, բազմաձայնային կատարմամբ, պատարագներու սրբապան երաժշտութեան և եկեղեցական շարականներու մատուցմամբ մեր ժողովուրդին հոգեկան վայելքին հետ։ Նոյն ուրախութեամբ լսեցինք նաև "Համապգային"ի երգչախումբին կատարումները։ Ոյժ տուէք Հայ գիրքին տարածման։ Ասոնց մեջ պիտի գտնէք հայ հոգիին ճառագայթումը։ Քաջալերեցէք հայ մամուլը՝ պայն ներկայութիւն դարձնելով ձեր ընտանեկան յարկերէն ներս։ Մեր ժողովուրդի ամենէն մեծ արժանիքները հայ մշակոյթով են արտայայտուած։ Գիտնանք մնալ այդ բարձրութեան վրայ և չտարուիլ սպառողական ընկերութեան յատուկ նիւթապաշտական և հաճոյապաշտական կեանքի փորձութիւններէն։ Աստրալիոյ մեջ կեանքը բարգաւաճութեան (affluence and prosperily) տուեալներով կը յառաջանայ։ Այդ պարգացմանը մեջ տնտեսական, առօրեայ կենցաղային պայմանները կը բարելաւուին։ Բայց այդ պարգացումը ունի նաև իր մեջ փորձութիւնը սոսկ նիւթապաշտական և հաճոյապաշտական ճաշակներու տարածման և տիրապետութեան։ Երբ զուտ սպառողական ընկերութեան (consumer society) մը յատուկ հոգեբանութեամբ մնած ըլլանք՝ բնականօրէն շատ բան կը գտնենք սպառելիք։ Աստրալիան առատութեան երկիր է։ Բայց սպառե՛լն է մեր կեանքի նպատակը, սոսկ հաճոյանա՛լն է մեր ապրելու ձգտումը, թէ՛ վայելելը այս բառին ամենաբարձր մարդկային հասկացողութեամբ, այսինքն՝ ճշմարտապէս երջանկութեան վիճակին ձգտելը։ Շատ սպառողը իր սպառած նիւթին ճնշումին տակ ի՛նքն է որ իբրև մարդկային էակ կը սպառուի...։ Չգոյշ ըլլանք. յարգենք մեր ջանքն ու

աշխատանքը և մեր քրտինքին արդիւնքը թող ըլլայ մեր հայկական կեանքի մարդկայնական բարձր արժէքներով մեր մշակոյթի աւանդոյթներով և նոր ստեղծագործական թռիչքներով իրագործումներու յառաջագնաց ընթացք և վայելքի աղբիւր:

Գ

Յատուկ ուրախութիւն եղաւ Մեզ համար շատ սերտօրէն յարաբերութեան մէջ գալ Աւստրալիոյ պետական և եկեղեցական իշխանութեանց և շրջանակներու հետ: Թէ՛ Նիւ Սաութ Ուէյլսի, թէ՛ Վիքթորիայի և թէ՛ Քանպերրա մայրաքաղաքին մէջ եղանք նահանգային վարչապետներու, քաղաքային իշխանութիւններու ներկայացուցիչներու, քաղաքապետներու, դաշնակցային պետութեան ընդհանուր վարչապետ՝ Մեծարգոյ Ճոն Հաուրրտին, Խորհրդարանի պատգամաւորներուն, դիւանագիտական ներկայացուցիչներուն և այլ պետական պատասխանատու անձերու և շրջանակներու հետ և անձամբ իրապէս դարձանք այն բարձր համարումին և խոր գնահատանքին, որ Աւստրալիոյ պետութիւնն ու ժողովուրդը ունին հանդէպ հայ ժողովուրդի Աւստրալիա-հպատակ իրենց քաղաքակրթներուն հանդէպ:

Սիրելիք,

Պատի՛ւ և յարգա՛նք ձեզի, ձեր բերած պարկեշտ, հաւատարիմ աշխատունակ քաղաքացիական մասնակցութեանը համար Աւստրալիոյ տնտեսական, ճարտարութատական, արհեստային, վաճառականական, ընկերային և քաղաքական ու հասարակական պետական կեանքին: Երկարատև պատմութիւն մը չէ ձեր գաղութային կեանքը Աւստրալիոյ մէջ: Հազիւ քանի մը տասնամեակներ կը հաշուէ ան: Բայց դուք այդ կարճատև ժամանակին իսկ մէջ յաջողած էք պատիւ և յարգանք շահիլ ոչ միայն անհատապէս, այլ նաև մեր հայ ազգի անունին համար: Տեսանք ձեր աշխոյժ, մեղուաջան աշխատանքի վկայութիւնները: Դուք Աւստրալիա գացիք արտասահմանեան այլապան երկիրներէ, ինչպէս Եգիպտոսէն, Լիբանանէն, Սուրիայէն, Պարսկաստանէն, Երուսաղէմէն, Յորդանանէն, Պոլիսէն, Իրաքէն և վերջերս նաև Հայաստանէն: "Գաղթական" կամ "թափառական" հայու պատկերին փոխարէն՝ դուք կերտեցիք պարկեշտ քաղաքացիի կերպար: Չեղաք օգտուող, ակնկալող: Եղաք մասնակցող, սատարող, ներդնող: Սա հայ մարդու դարաւոր չարքաշութեան կնիքով դրոշմուած պատկերն է մեր ճակատներուն: Դուք զայն պայծառ պահեցիք Աւստրալիոյ մէջ: Ապրի՛ք, հապա՛ր ապրի՛ք: Եւ՝ շարունակեցէք այսպէս ապրիլ յառաջադիմական և վարգացողական վերելքով: « Հալա՛լ » ըլլայ ձեր հայու քրտինքը:

Միջ-յարաբերական այս մարզին մէջ Մենք խոր հրճուանքով վկան եղանք նաև մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ գործօն մասնակցութեան Միջ-եկեղեցական կեանքի և գործունէութեան մարզին մէջ: Թէ՛ Աւստրալիոյ Եկեղեցիներու Ազգային Խորհուրդին (National Council of the Churches in Australia), թէ՛ Նիւ Սաութ Ուէյլսի և թէ՛ Վիքթորիայ, Եկեղեցիներու Խորհուրդներուն հետ մեր միասնական աղօթքները, հանդիպումները և խօսակցութիւնները ի յայտ բերին մեր եկեղեցւոյ հանդէպ խոր յարգումութեան երևոյթը

օտար եկեղեցիներու կողմէ: Մենք չգացինք և օտարներու վկայութեամբ ալ հաստատեցինք, որ մեր Առաջնորդ Սրբապանին՝ Գերաշնորհ Տ. Աղան Արքեպիսկոպոսի հանգամանքը որպէս առաջին նախագահ Աւստրալիոյ եկեղեցիներու Ազգային Խորհուրդին ձևական բնոյթէն շատ անդին՝ իր գործօն և դրական մասնակցութեան պտուղն է:

Շարունակեցէք այդ էկումենիկ տարածքը (ecumenical dimension) մեր եկեղեցւոյ գործունէութեան Աւստրալիոյ մէջ: Ներկայ ժամանակներու ընդհանուր մարդկային և եկեղեցական կեանքը չի թոյլատրեր կղզիացում (isolation): Մեծապէս կ'օգտուիք ընդհանուր եկեղեցւոյ դրական գործունէութենէն և առողջ փորձառութիւններէն: Միւս կողմէ, նաև մեծ նպաստ կը բերէք մեր եկեղեցին հարապատօրէն, աւելի մօտէն և ամբողջականօրէն ծանօթացնելով օտար եկեղեցիներուն:

Դ

I want to write this part of my Pastoral Letter in English as it is addressed to our youth who surely will understand me better if I use the language which is the one they are more familiar with.

In the course of my pastoral-pontifical visit, I was indeed very happy to have opportunities of meeting you, hearing you and speaking to you. I can never forget your packed attendance at the meeting in the Willoughby Town Hall where I listened to your questions, became aware of your concerns and tried to respond to them in the limits of my knowledge, experience and the vision of our Armenian Church's present-day predicament and the future prospects. I will never forget you. You will constantly be present in my prayers.

I want you to keep in mind two major lines of orientation:

a) The world in which we live today is a multi-faceted world, in which new trends of culture, new concepts of morality, new sets of values, new patterns of thought and new ways of behaviour are often creating a chaos, a kind of, what I call, confusion of values. You are called to make choices. You cannot go along without using certain criteria. Our Christian faith and our Armenian Christian tradition can serve you in establishing your criteria. You live in this world and you cannot ignore the modern changes and movements. But you have to use your own sense of discernment. There are values and values. Which ones to adopt and to follow? Do not fall victim to any wind that blows around you. Follow the one that has godliness in it, the seeds of true happiness. Avoid the ones that take you away from your genuine humanness and true Armenianness. Keep in mind the story of the young person who approached Jesus. Read the passages in the Gospels of St. Matthew (chapter 19, verses 16-28) and St. Mark (chapter 10:17-31) and of St. Luke, (chapter 18:18-30).

May I ask you to read also one of my own writings under the title: "How I see the youth" in my book "In Search of Spiritual Life?"

b) Learn the greatest lesson of what I call responsible engagement. For me being young means getting involved in action, in positive action. Learn from the experience of your elders; but go beyond, keeping the spirit alive and unchanged, but giving new expression to what you learn.

Our Armenian Church tradition is not a dead tradition. It is a living and life-

giving tradition. Tradition with a capital T is not something archaic. Traditions, in plural, change. Your involvement, your participation in our community life, through the Armenian schools, the Sunday schools, the Church Choirs, the youth movements and various forms of Church and community services will greatly enhance the quality of the life of our Church in Australia.

Please never forget the words responsible engagement that I just used. And the word responsible is the key word. Whoever assumes responsibility learns much and serves better.

May the Lord guide you in your lively participation in the life of our Armenian Apostolic Church in Australia and also in the ecumenical dimension of that life and work.

Ե

Սիրելիք,

Մեր հովուապետական այցելութեան ընթացքին Մենք յաճախ առիթներ ունեցանք խօսելու մեր նորանկախացեալ Հայաստանին, Մայր Հայրենիքին և վերանորոգութեան շունչով ապրող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին: Մեր բնօրանն է մեր հայրենիքը, մեր պատմութեան թատերաբեմն է ան, մեր ազգային ինքնութեան օճախը: Դուք կ'ապրիք Աւստալիոյ մէջ, ուր ունիք որպէս աւագ պարտականութիւն ձեր ազգային-եկեղեցական կեանքին, ձեր դպրոցական-մշակութային և ընկերային կեանքին բարգաւաճ և յառաջընթաց պահպանումը: Ի գործ դրէք ձեր գերագոյն կարելին որպէսզի առոյգ, շէն, կենսունակ ընթանայ ձեր համայնքային կեանքը, իր բոլոր երեսներով:

Անոր կողքին արթուն և առողջ պահեցէք նաև ձեր կապուածութիւնը Մայր Հայրենիքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ձե՛րն են անոնք, ինչպէս բոլոր հայերունը, ուր ալ ապրին անոնք՝ Հայաստանի մէջ թէ արտասահմանի տարածքին:

Բոլորդ ալ քաջ գիտէք որ մեր նոր, Ապատ և Անկախ Հանրապետութեան ստեղծումը, Արցախի մեր պատուական և քաջարի ժողովուրդին արդար իրաւունքներու պահպանումը, մեր հայրենիքին վերաշինութիւնը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր, կրօնական, կրթական, մշակութային, ազգային և ընկերային ծառայութեանց առաքելութիւնը նոր հրամայականներու և նոր պարտաւորութիւններու առջև կը դնեն բոլորս: Դժուարին օրերու մէջէն կ'անցնինք այստեղ Մայր Հայաստանի մէջ: Ժողովուրդի տնտեսական, ընկերային, առօրեայ կենցաղային դժուարութիւնները ամենօրեայ մեր մտահոգութիւնն են: Արցախի ժողովուրդին կեանքի պայմաններուն վարգացումը և անոնց արդար իրաւունքներու ամուր պահպանումը, նոր եկեղեցականներու պատրաստութեան գործը, դպրոցական, մտաւորական, մշակութային կեանքին նուիրուած անձերուն հանդէպ նիւթական և բարոյական աջակցութեան անհրաժեշտութիւնը մեզ բոլորս կը հրաւիրեն պարտականութեան և զոհողութեան: Հայրենիքի և եկեղեցիի սէրը սոսկ զգացումով և խօսքով չի կրնար արտայայտուիլ: Հայրենասիրութեան անունը հայրենակերտութիւն է: Եկեղեցասիրութեան անունը եկեղեցաշինութիւն է: Ազգասիրութեան անունը մարդակերտութիւն է, ճշմարիտ հայու կերպարով: Խորհրդային

քոնակալ վարչակարգէն և ընդհանուր կեանքի սխառտմէն դուրս գալը և նոր ու ապատ կեանքի պայմաններուն ստեղծումը դիրքին գործ չէ: Բայց սրբապա՛ն գործ է: Հայոց ապատագրութեան նուիրումը երգերէն սա տողը կը վերյիշեցնէմ ձեզի. « ով որ քաջ է՝ ի՞նչ կը սպասէս»: Ժամանակը այսօրն է: Կը յիշե՞ք որ այնտեղ, Աւստրալիոյ մէջ, "ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ" ազգային քայլերգին բառերը մի՛ քիչ փոխելով կ'ըսէի ձեզի. « Մեր հայրենիք... իւր քաջ որդւոց սուրբ քրտինքով պիտի լինի կառուցեալ »:

Յարգեցէք ձեր քրտինքը: Մի՛ վատնէք անոր արդիւնքը՝ ձեր վաստակը: Անհմատ մտնումներու և անարժէք շռայլութիւններու փորձութիւններէն հեռու մնացէք: Արժէքաւոր նպատակներով արժեցուցէք ձեր քրտինքը: Ձեր մասնակցութիւնը լայնօրէն բերէք մեր հայրենիքի պետութեան ամրացմանը, մեր հայրենի ժողովուրդի կեանքի պայմաններուն բարելաւմանը և մեր եկեղեցւոյ ժողովրդանուէր ծառայութեան պարգացմանը: Պէտք է լայն կարելիութիւններ ստեղծենք որ հայրենաբնակ մեր ժողովուրդը կարենայ իր սեփական գործով, իր սեփական ջանքով իր կեանքը բարելաւել մեր հայրենիքին մէջ, որպէսզի ամրանայ մեր պետութիւնը և բարգաւաճի մեր կեանքը մեր սեփական մայր հայրենիքին մէջ:

Ս. Էջմիածնի միջոցով, "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամի ճամբով և այլ եղանակներով ընծայեցէք ձեր մասնակցութեան բաժինը: Այս ճակատագրական օրուրուն կտրեցէ՛ք ձեր աւելորդ ծախսերէն, ժուժկայութեան, չափաւորութեան սկզբունքներով շարժեցէք, ձեր իսկ առողջութեան և երջանկութեան սիրոյն: Եւ ո՛չ ոք թող անմասն մնայ իր մայր հայրենիքի և Մայր Աթոռի վերակերտումի այս օրերու նուիրական գործէն: Ձեր անունը ձեր քրտինքով խառնեցէք Հայաստանի ժողովուրդին, հայրենիքի Պետութեան և մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարեգրութեանց մէջ: Հայոց պատմութեան կերտումին մէջ ներկա՛յ եղէք: Եւ՝ գործնապէ՛ս:

Կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ ձեզ բոլորդ պահէ առողջ, ձեր գործերուն շնորհէ լիառատ յաջողութիւն, ձեր անհատական, ընտանեական և ազգային-եկեղեցական կեանքին բարգաւաճութիւն:

Լսեցէք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յաւիտենօրէն ճշմարիտ և փրկարար խօսքը. — « Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց. » Այս "ոսկեղէն կանոն" (golden rule) կոչուած աւետարանական համարին հրամայականին տակ ապրեցէք ձեր կեանքը Աւստրալիոյ մէջ, և՛ ամենուրէք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւետօրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

2 Մարտ, 1997

ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին